ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ

/2022-2023, 2023-2024, 2024-2025, 2025-2026 (առաջին կիսամյակ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ/

ԳԱՎԱՌ-2026

1.	**1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ** 1.ԳՊՀ սահմանված գերակա ուղղությունները համընդգրկուն են և հաճախ խաչվում են, ձևակերպված տեսլականը հատվածային է, շահակիցների շրջանում չկա միասնական պատկերացում բուհի զարգացման տեսլականի վերաբերյալ: 2.Հոգաբարձուների խորհրդում ներկայացված և չներկայացված շահակիցների ազդեցությունը նպատակների ձևավորման վրա ունի ինստիտուցիոնալացման կարիք:				
	Ակնկալվող արդյունքը	**Նախատեսվող միջանկյալ արդյունքները (քանակական և/կամ որակական)**		**Միջանկյալ արդյունքների գնահատման/ ստուգման ժամկետները**	**2022-2023, 2023-2024 ուսումնական տարիներին ԳՊՀ-ում իրականացված աշխատանքների արդյունքները**
1.	ԳՊՀ 2023-2027թթ. ռազմավարական ծրագիր /այսուհետ՝ ՌԾ/՝ շահակիցների ակնկալիքներին համապատասխանող տեսլականով, տարանջատված գերակա ուղղություններով, գործողությունների պլաններ, դրանց իրականացման արդյունավետության գնահատման համար մշակված մշտադիտարկման կառուցակարգեր, իրականացված բարելավումներ:	1.1.	ՌԾ-ում հստակեցված գերակա ուղղությունների համար սահմանված քանակական և որակական առաջընթացի գնահատման ցուցիչներ:	1.1. 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակ	Հաշվետու ժամանակահատվածում վերլուծվել է Գավառի պետական համալսարանի 2017-2022թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների մշտադիտարկման պլանը, արդյունքները հրապարակվել են: Մշտադիտարկման արդյունքների հաշվառմամբ համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, ներքին ու արտաքին շահակիցների մասնակցությամբ մշակվել և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել է ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը, որը գործողության մեջ է դրվել 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից: Ռազմավարական ծրագրում սահմանված գերակա ուղղությունները վերանայվել և գրեթե կիսով չափ օպտիմալացվել են: Այսպես՝ ի տարբերություն ԳՊՀ 2017-2022թթ. զարգացման ռազմավարական ծրագրի, որտեղ նախատեսված էին համալսարանի գործունեության 9 հայեցակարգային ուղղություններ, 2023-2027թթ.

					ռազմավարական ծրագրի իրականացման համար սահմանվել են հետևյալ 5 գերակա ուղղությունները՝ 1. կրթական, սոցիալ-մշակութային, 2. գիտահետազոտական, նորարարական, 3. կառավարչական, ֆինանսատնտեսական, ռեսուրսային ապահովման, 4. հանրային պատասխանատվության, արտաքին կապերի և միջազգայնացման, 5. հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ոլորտներում: Ի տարբերություն նախորդ ՌԾ-ի, 2023-2027 թվականների ՌԾ-ում, ըստ յուրաքանչյուր ոլորտի նպատակների ու խնդիրների, մշակվել և ամրագրվել են գործողությունների քանակական և որակական առաջընթացի գնահատման արդյունավետության ցուցիչները: «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագիրը հասանելի է հետևյալ հղումով՝ https://gsu.am/wp-content/uploads/2024/04/1.2%D4%B3%D5%8A%D5%80-%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%8023-27.pdf
		1.2.	ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանում ների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլաններ՝ ըստ ՌԾ գերակա ուղղությունների:	1.2. 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակ	ԳՊՀ 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի հիման վրա մշակվել և համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվել է ԳՊՀ զարգացման նոր ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանը, ներկայացվել է կառուցվածքային ստորաբաժանումներին, հրապարակվել ԳՊՀ պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղումով՝ https://gsu.am/wp-content/uploads/2024/11/%D4%B3%D5%8A%D5%80-2023-2027%D5%A9%D5%A9%E2%80%A4-%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1

					%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%AB-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BA%D5%AC%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AE%D5%9D-%D6%84%D5%B6%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B6%D5%A5%D6%80-%E2%80%94-%D0%BA%D0%BE%D0%BF%D0%B8%D1%8F.pdf ԳՊՀ-ում առկա են նաև միջնաժամկետ՝ 2023-2025 և 2025-2027 թվականների և կարճաժամկետ՝ տարեկան, գործողությունների պլաններ՝ ըստ ՌԾ գերակա ուղղությունների, որոնց հիման վրա կազմվում են համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան գործողությունների պլանները, իրականացվում մշտադիտարկումներ, վերլուծվում տվյալները:
		1.3.	ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումնե րի երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման պլաններ, արդյունավետության ցուցիչներից շեղումների պատճառների՝ հրապարակված, շահակիցներին հասանելի վերլուծություններ:	2022-2023 ուստարվանից սկսած՝ յուրաքանչյուր ուստարի	Հաշվետու ժամանակահատվածում շարունակաբար իրականացվել են ԳՊՀ ՌԾ գերակա ուղղություններով կատարված աշխատանքների արդյունավետությունից շահակիցների բավարարվածության գնահատումներ, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման պլանների միջոցով վերահսկվել է արդյունավետության ցուցիչների կատարողականը, դրանցից շեղումները, պատճառները վերլուծվել, տարեկան գործունեության հաշվետվությունների արդյունքները ներկայացվել են ամենշաբաթյա պարբերականությամբ տեղի ունեցող ԳՊՀ ռեկտորատի, ամիսը առնվազն մեկ անգամ տեղի ունեցող գիտական խորհրդի և տարեկան առնվազն մեկ անգամ տեղի ունեցող հոգաբարձուների խորհրդի նիստերին: Այս գործընթացների արդյունքները արտացոլվել են ԳՊՀ ամենամյա հրապարակված ինքնավերլուծության զեկույցներում՝ ըստ ՌԾ գերակա ուղղությունների, ինչպես

					նաև միջնաժամկետ հաշվետվություններում, շահակիցների բավարարվածության գնահատման նպատակով ՈԱԲ-ի կողմից իրականացված վերլուծություններում: Դրանք տեղադրվել են ԳՊՀ պաշտոնական կայքէջում և հասանելի են թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցներին՝ հետևյալ հղումով. https://gsu.am/hy/%d5%b0%d5%a1%d5%b7%d5%be%d5%a5%d5%bf%d5%be%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/
		1.4.	Գերակա ուղղություններով կատարված աշխատանքների արդյունավետությունից շահակիցների բավարարվածության աստիճանի աճ:	1. 2022-2023 ուստարվանից սկսած՝ յուրաքանչյուր ուստարի, 2. 2024-2025 ուստարում միջնաժամկետ ծրագրի գնահատում, 3.2026-2027թթ. ՌԾ նպատակների իրականացման ամփոփիչ հաշվետվության գնահատում:	Հաշվետու ժամանակահատվածում ՌԾ գերակա ուղղություններով կատարված աշխատանքների արդյունավետությունից շահակիցների բավարարվածության գնահատումը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից անցկացված տարաբնույթ հարցումների միջոցով: Ներքին շահակիցների բավարարվածությունը գնահատելու համար ուսանողների շրջանում անցկացված հարցումները ուղղված են եղել ԳՊՀ առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանմանը, ԳՊՀ-ում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատմանը, հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետության բացահայտմանը, բակալավրիատում և մագիստրատուրայում պրակտիկաների կազմակերպման և անցկացման, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի արդյունավետության բացահայտմանը, ԳՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատմանը, ԳՊՀ ուսումնական ռեսուրսներից ուսանողների բավարարվածության գնահատմանը: Դասախոսների շրջանում անցկացված հարցումները ուղղված են կրթական ռեսուրսներից դասախոսների բավարարվածության գնահատմանը: Անցկացվել են հարցումներ նաև ԳՊՀ վարչական և ուսումնաօժանդակ

					անձնակազմերի անդամների բավարարվածության գնահատման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում անցկացվել են հարցումներ նաև արտաքին շահակիցների շրջանում: Գործատուների կողմից գնահատվել են պրակտիկայի մասնակից ուսանողների մասնագիտական գիտելիքները, կարողությունները, ինչպես նաև ԳՊՀ-ում աշխատանքահեն ուսուցման իրականացման հնարավորությունները: Անցկացվել են հարցումներ նաև Արցախից բռնի տեղահանված և Գավառի պետական համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով: Վերոնշյալ բոլոր հարցումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր ուղղություններով 2022-2023 ուսումնական տարում գրանցվել է բավարարվածության ցուցանիշների աճ նախորդող ժամանակահատվածի համեմատ: 2022-2023 և 2023-2024 ուստարվա հարցումների արդյունքների համեմատությամբ որոշ ուղղություններով դիտվում է բավարարվածության ցուցանիշների նվազում: Վերլուծությունները փաստում են, որ նվազումը կապված է ԳՊՀ-ում որակի մշակույթի արմատավորման, շահակիցների կողմից գնահատման օբյեկտիվության աճի, ֆորմալ վերաբերմունքի հաղթահարման և շահագրգիռ մոտեցման, ինչպես նաև տարբեր ուղղություններով բավարարվածության աճի մասին: Վերոնշյալ բոլոր հարցումների արդյունքները հասանելի են հետևյալ հղումով՝ https://gsu.am/hy/%d5%b0%d5%a1%d6%80%d6%81%d5%b8%d6%82%d5%b4%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%be%d5%a5%d6%80%d5%ac%d5%b8%d6%82%d5%ae%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/ Տվյալ գործընթացը կրում է շարունակական բնույթ. աշխատանքներն իրականացվում են պարբերաբար և միտված են գործունեության արդյունավետության ապահովմանն ու հետագա բարելավմանը:

		1.5.	ՌԾ նպատակների իրականացմանը միտված գործողությունների պլաններ՝ գործընթացների հիմնավորված և հաջորդական սահմանմամբ:	2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակ	ՌԾ իրականացմանը միտված պլանում յուրաքանչյուր գերակա ուղղության համար սահմանվել են ռազմավարական նպատակներ, այդ նպատակների իրականացման համար առաջադրվել են խնդիրներ, դրանց լուծմանը միտված գործողություններ: Գործողությունների պլանում պահպանվել են պլանավորման տրամաբանությունը և գործողությունների իրականացման հաջորդականությունն ու աստիճանականությունը, որոնք ուղղված երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ նպատակների իրականացմանը: Առանձնացվել են այն խնդիրներն ու գործողությունները, որոնք կարող են կատարվել կարճ ժամանակահատվածում (1-2 տարի) և ավելի ընդգրկուն գործողությունները, որոնք կպահանջեն երկարաժամկետ աշխատանք կամ կկրեն շարունակական բնույթ (3-4 տարի): ՌԾ գործողությունների պլանը կազմելիս՝ հաշվի են առնվել սահմանված յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսները, նշվել, թե որ ստորաբաժանումը կամ ստորաբաժանումներն են պատասխանատու տվյալ գործողության կատարման համար, ամրագրվել են տվյալ գործողության համար առկա և պահանջվող ռեսուրսները, սահմանվել գործունեության արդյունավետության կոնկրետ և չափելի ցուցիչներ /ԳԱՑ-եր/: Ռազմավարական ծրագրից ածանցված միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլաններում գործընթացները հիմնավորված են և հաջորդաբար սահմանված:
		1.6.	ԳՊՀ ռազմավարական պլանավորման գործընթացին մասնակցությունից շահակիցների բավարարվածության աստիճանի աճ:	2022թ., 2024թ.,	ԳՊՀ 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի նախագիծը մշակվել և վերջնական տարբերակը կազմվել է փուլային և բազմանձնյա (կոլեգիալ) մասնակցության սկզբունքներով: Գավառի պետական համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկվել են Համալսարանի վարչական և ուսումնաօժանդակ կազմի անդամները, դասախոսները, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահները,

					տարբեր բաժիններում սովորող ուսանողներ: Համալսարանի նախաձեռնությամբ ՌԾ մշակման աշխատանքներին մասնակցելու համար հրավիրվել են նաև արտաքին շահակիցներ /մարզպետարանի, համայնքապետարանի ներկայացուցիչներ/, մարզի զարգացման առաջնահերթությունների և ՌԾ գերակա ուղղությունների համապատասխանեցման նպատակով: Նախագիծը երկար ժամանակակ տեղադրված է եղել նաև ԳՊՀ կայքէջի «Նախագծեր» հատվածամասում՝ հասանելի լինելով ներքին և արտաքին շահակիցներին: ՌԾ նախագիծը քննարկվել է ամբիոնների, ֆակուլտետների խորհուրդների, գիտական խորհրդի նիստերում, որտեղ ևս ընդգրկված են ինչպես ներքին շահառուներ, այնպես էլ՝ արտաքին շահակիցներ: Գիտական խորհրդի հաստատումից հետո ՌԾ-ն քննարկվել և հաստատվել է հոգաբարձուների խորհրդի նիստում: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ բոլոր շահակիցները ներգրավված են եղել համալսարանի ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքներում՝ հնարավորություն ունենալով ներկայացնել առաջարկություններ և դիտարկումներ:

2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Կոլեգիալ կառավարման մարմինների միջոցով չի ապահովվում կառավարման լիարժեք կոլեգիալությունը:
2. Կառավարման համակարգի՝ ռեսուրսներով ապահովվածության կրիտիկական խնդիրներ չեն վերհանվել, կատարողականներում առկա են լինում զգալի շեղումներ, որոնք չեն առաջացնում փոփոխություններ:
3. Փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում սահմանված ցուցիչների երբեմն ոչ չափելի բնույթը, որը կարող է մշտադիտարկումը դարձնել ձևական, ինչի արդյունքում չեն կատարվի անհրաժեշտ եզրակացություններ:

2.	2.1. Հոգաբարձուների խորհրդի և ԳՊՀ կառավարման մյուս մարմինների միջոցով ԳՊՀ կառավարման կոլեգիալության լիարժեք ապահովում: 2.2. ԳՊՀ կառավարման գործընթացներում հոգաբարձուների խորհրդի ներգրավվածության ավելացում:	2.1.1. 2.1.2. 2.2.1.	Համալսարանի կոլեգիալ կառավարման մարմինների անդամների ակտիվության և նախաձեռնողականության աճ, մասնակցային կառավարման կառուցակարգերի բարելավում: Կառավարման համակարգի, դրա առանձին օղակների և հատկացվող ռեսուրսների գնահատման մեխանիզմների մշակում և ներդնում, խնդիրների և շեղումների պատճառների վերհանում և դրանցով պայմանավորված փոփոխությունների իրականացում: Հոգաբարձուների խորհրդի անդամների առաջարկություն ների արդյունքում բարելավված գործընթացներ:	2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակ	ԳՊՀ ՄԿԾ-ների իրականացման առանձին բաղադրիչների և դրանց հատկացվող ռեսուրսների գնահատման արդյունքում, ինչպես նաև ԳՊՀ ստորաբաժանումների միջև համագործակցային կապերի ամրապնդման, գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացման, ֆինանսական ռեսուրսների խելամիտ տնօրինման նպատակով՝ ինչպես կառուցվածքային ստորաբաժանումների, այնպես էլ Հոգաբարձուների խորհրդի առաջարկությամբ փոփոխություն է կատարվել ԳՊՀ ստորաբաժանումների կառուցվածքային մոդելում՝ միավորվել են նույնանուն ՄԿԾ-ների առկա և հեռակա բաժինները սպասարկող ստորաբաժանումները՝ համալսարանի կառուցվածքի վերակազմակերպման արդյունքում ապահովելով բովանդակային, գործառութային և ռեսուրսային բարձր արդյունավետություն: ԳՊՀ կառուցվածքը հաստատվել է Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ: «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի նոր կառուցվածքը ներկայացվում է հետևյալ հղումով՝ https://gsu.am/wp-content/uploads/2024/04/1.15-%D4%B3%D5%8A%D5%80-%D5%B0%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%A4%D6%80%D5%A1%D5%B4%D5%AB-%D5%AF%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE%D6%84%D5%A8.pdf
	2.3. Ստորաբաժանումների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունն ի պլաններ՝ քանակական և որակական չափելի ցուցիչներով, բխեցված բուհի ՌԾ-ից և համապատասխանեց	2.3.1.	Կառուցվածքային ստորաբաժանումնե ի գործողությունների պլանների մշտադիտարկման վերլուծություններ:	2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակ	Մշակված են ԳՊՀ բոլոր ստորաբաժանումների համար երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլաններ՝ քանակական և որակական չափելի ցուցիչներով, բխեցված բուհի ՌԾ-ից և համապատասխանեցված ստորաբաժանման առանձնահատկություններին: Կիսամյակային և տարեկան կտրվածքով իրականացվում են գործողությունների պլանների կատարողականի մշտադիտարկումներ, վերլուծվում արդյունքները՝ ներկայացվելով ԳՊՀ գիտական խորհրդի հաստատմանը:

	ված ստորաբաժան ման առանձնահատկու թյուններին:				
3.	**3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ** 1.Ապահովել մագիստրատուրայի և բակալավրիատի մասնագրերում տարբերակված վերջնարդյունքներ, որոնք լինեն հստակ և չափելի, ամրապնդել առանձին կառուցամասերի վերջնարդյունքները, բազմազանեցնել ուսումնառության և գնահատման մեթոդները: Հստակեցնել բենչմարքինգի իրականացման պարբերականությունն ու մեթոդաբանությունը, ինչպես նաև բուհերի ընտրության չափանիշները: 2.Ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի գրախոսականներին ներկայացվող պահանջներում ներառել բաղադրիչներ, որոնք միտված կլինեն ընդհանուր վերջնարդյունքների ստուգմանը, եզրակացություն անելու կարողությունների գնահատմանը:				
	3.1. ԳՊՀ բակալավրիատի թվով 16 և մագիստրատուրայի 13 վերանայված և հստակ տարբերակված, չափելի, համապատասխան կառուցամասերով, վերջնարդյունքներով, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներով սահմանված արտաքին փորձաքննություն անցած կրթական ծրագրեր:	3.1.1.	ԳՊՀ բոլոր կրթական ծրագրերի համապատասխանեցում ՀՀ ՈԱՇ-ի, ինչպես նաև առկայության դեպքում՝ ՈՈՇ-ների բնութագրիչների հետ:	2024թ.	2022-2023 ուսումնական տարում վերանայվել են բակալավրի 12 մասնագիտական կրթական ծրագրեր և մագիստրատուրայի 11 մասնագիտական կրթական ծրագրեր: 2023-2024 ուսումնական տարում վերանայվել են բակալավրի 11 մասնագիտական կրթական ծրագրեր և մագիստրատուրայի 11 մասնագիտական կրթական ծրագրեր: Գործող մասնագիտությունների համար կազմված են ՀՀ ՈԱՇ-ին և ՈՈՇ-ին (առկայության դեպքում) ստորև ներկայացված հիմքերին համապատասխանեցված ՄԿԾ-ների մասնագրեր և ուսումնական պլաններ: **Հիմք՝** 1) Գավառի պետական համալսարանի բարձրագույն կրթության որակավորումների շրջանակ 2) Գավառի պետական համալսարանում ուսուցանվող մասնագիտության կրթական ծրագրի մշակման, հաստատման, իրականացման ընթացքի մշտադիտարկման և բարելավման ընթացակարգ 3) Գավառի պետական համալսարանի մասնագիտական կրթական ծրագերի վերջնարդյունքների համապատասխանությունը ՈԱՇ պահանջներին 4) Գավառի պետական համալսարանում կրթության որակի ապահովման ձեռնարկ 5) Համապատասխան ՄԿԾ-ների մասնագրեր և ուսումնական պլաններ:

		3.1.2.	Ամբիոնների կողմից բարելավված, դասավանդման, ուսումնառության և գնահատման տարբերակված մեթոդներով նկարագրված ՄԿԾ-ներ:	2024թ.	Հաշվետու ժամանակահատվածում ամբիոններում ՄԿԾ-ների բարելավումը և արդիականացումը կրել է շարունակական բնույթ: Հիմքում ունենալով կրթական ծրագրերի սահմանված ակնկալվող վերջնարդյունքները՝ վերանայվել և բարելավվել են ուսուցման և ուսումնառության, ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդները: Գործընթացի հաջորդականությունը պահպանելու համար վերանայվել են նաև ՄԿԾ-ների ուսումնական պլաններում ներառված դասընթացների առարկայական ծրագրերի մաս կազմող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները, վերանայվել և բազմազանեցվել են անհատական, ինքնուրույն հետազոտական, կուրսային, գործնական աշխատանքների թեմաները, առաջարկվող մասնագիտական գրականության ցանկը: **Հիմք՝** 1) Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մասնագրեր և առարկայական նկարագրեր 1) Դասընթացների առարկայական ծրագրեր:
		3.1.3.	Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունից ուսանողների բավարարվածության աստիճանի աճ:	2024-2025 ուստարի	ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից անցկացվել են հարցումներ, որոնց արդյունքների վերլուծությամբ դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունից ուսանողների բավարարվածության աճ է արձանագրվել: Այսպես՝ նախորդ ուսումնական տարվա համեմատ 2022-2023 ուստարում բավարարվածությունն աճել է 0,13 նիշով, 2023-2024 ուստարում այն չի նվազել: **Հիմք՝** 1) ԳՊՀ ՈԱԲ-ի վերլուծություններ՝ https://gsu.am/hy/%d5%b0%d5%a1%d6%80%d6%81%d5%b8%d6%82%d5%b4%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%be%d5%a5%d6%80%d5%ac%d5%b8%d6%82%d5%ae%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/

	3.2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսման գործընթացից շահակիցների բավարարվածության աստիճանի աճ:	3.2.1.	Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսման նոր ձևաչափեր, որոնք կներառեն ուսանողների ձեռքբերած վերջնարդյունքների, եզրակացություններ անելու կարողության ստուգման չափանիշներ:	2023թ.	Նախատեսվող կատարողականի կարճ շրջափուլի, ինչպես նաև ոչ բավարար փաստահենք տվյալների առկայության պատճառով նշված ոլորտում փոփոխությունները տեղափոխվել են հաջորդ ուսումնական տարի՝ հիմքում ունենալով ԳՊՀ բակալավրիատում ավարտական աշխատանքի և մագիստրատուրայում մագիստրոսական թեզի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ՝ շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման արդյունքերի վերլուծությունները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների եզրակացությունները, հանձնաժողովների նախագահների հաշվետվություններն ու կարծիքները:
	3.3. Բենչմարքինգի իրականացման գործընթացի արդյունավետության աճ, հրապարակված վերլուծություններ:	3.3.1.	Համադրելի կազմակերպությունների ընտրության չափանիշների, բենչմարքինգի իրականացման նոր մեթոդաբանության մշակում, գործարկում:	2024թ.	Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել է ԳՊՀ-ի կողմից առաջավոր փորձի ուսումնասիրման, վերլուծության և համադրման (բենչմարքինգի) ընթացակարգը, որտեղ հստակ սահմանվել են համադրելի կազմակերպությունների ընտրության չափանիշները, համապատասխան ոլորտի բենչմարքինգի իրականացման մեթոդաբանությունը, իրականացման գործընթացի ընթացակարգը: **Հիմք՝** 1) ԳՊՀ-ի կողմից առաջավոր փորձի ուսումնասիրման, վերլուծության և համադրման (բենչմարքինգի) ընթացակարգ:
4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ **1**. Թեև համալսարանը ուսանողների հավաքագրման համար կիրառում է մի շարք մեխանիզմներ և համալիր միջոցառումներ, այնուամենայնիվ դրանց կիրառումը չի հանգեցրել ընդունելության ցուցանիշների աճի, ինչը պայմանավորված է նաև օբյեկտիվ հանգամանքով: 2.Ուսանողների, ուսանողական կառույցների նախաձեռնողականության պակասը, թույլ դերակատարությունը կարիքների վերհանման և գնահատման գործընթացում, կարիերային նպաստող ծառայությունների մասին տեղեկատվական աշխատանքների պասիվություն: 3. Ուսանողների շատ քիչ մասն է իրազեկված կարիերայի կենտրոնի մասին: Կենտրոնը՝ որպես առանձին կառուցվածքային միավոր, առանձնացված չէ: 4.Թույլ է ուսանողների նախաձեռնողականությունը, նրանց հետաքրքրությունը կառավարման մարմիններում որոշումների կայացման գործընթացների նկատմամբ:					
4.	4.1. Դիմորդների թվի աճ:	4.1.1.	Ուսանողների հավաքագրման մեխանիզմների բարելավում և իրականացվող միջոցառումների	2022-2023 ուստարի	Ուսանողների հավաքագրման մեխանիզմների բարելավման նպատակով հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ կնքվել և վերակնքվել են

			արդյունավետության բարձրացում:		համագործակցության թվով 6 պայմանագրեր և 7 հուշագրեր: Ուսումնասիրվել են հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների կրթական կարիքները, անցկացվել են հանդիպումներ, համատեղ քննարկումներ, առցանց և անցանց տարաբնույթ միջոցառումներ՝ ուղղված հանրակրթական դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը: Վերը թվարկված միջոցառումների արդյունքում՝ ԳՊՀ-ի 2023-2024 ուստարում առկա և հեռակա ուսուցման բակալավրատի, մագիստրատուրայի, միջին մասնագիտական կրթություն ունեցող բարձր առաջադիմությամբ շարունակական կրթության կարգով ԳՊՀ դիմորդների թվաքանակի աճ է գրանցվել: **Հիմք՝** 1) ԳՊՀ գործունեության հաշվետվություն և ինքնավերլուծության զեկույցներ 2) Հաշվետու ուստարվա դրությամբ ՀՀ հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կնքված 79 պայմանագրեր և համագործակցության հուշագրեր:
		4.1.2.	Դիմորդների հավաքագրմանն ուղղված ծրագրերի քանակի աճ:	2024թ.	Ուսանողական համակազմի համալրման ուղղությամբ տարվող աշխատանքների մեթոդաբանությունը բազմազանեցվել է: Առաջնային են համարվել ոչ միայն մարզի հանրակրթական դպրոցներ ացելությունները, դիմորդների կարիքների վերհանումը, այլև հանրակրթական դպրոցների հետ համատեղ միջոցառումների, բաց դասերի, կլոր-սեղան քննարկումների, առցանց և անցանց հանդիպումների, ինտելեկտուալ մրցույթների, խաղ-վիկտորինաների, ընդհանուր խորհրդատվական կամ առարկայական ուղղվածությամբ նախաձեռնությունների կազմակերպումը և անցկացումը: Արդյունքում նախորդ ուստարվա համեմատությամբ հաշվետու ժամանակահատվածում կատարվել են այցելություններ ՀՀ Գեղարքունիքի մարզի

					հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, դպրոցների հետ կնքվել և վերակնքվել են համագործակցության թվով 35 պայմանագրեր և 5 հուշագրեր: Համատեղ իրականացվել են ավելի քան 50 միջոցառումներ: **Հիմք՝** 1) ԳՊՀ գործունեության հաշվետվություն և ինքնավերլուծության զեկույցներ՝ https://gsu.am/hy/%d5%b0%d5%a1%d5%b7%d5%be%d5%a5%d5%bf%d5%be%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/ 2) Հաշվետու ուստարվա դրությամբ ՀՀ հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կնքված 113 պայմանագրեր և համագործակցության հուշագրեր:
	4.2. Ուսանողների կարիքների վերհանման գործում ուսանողական կառույցների դերի բարձրացում:	4.2.1.	Ուսանողական կառույցների կողմից ուսանողների կարիքների վերհանման ներդրված մեխանիզմ:	2023-2024 ուստարի	Ուսանողական կառույցների կողմից ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները հիմնականում ուղղված են ուսանողների ակտիվ ներգրավմանը ուսանողական կառույցների աշխատանքներին՝ միտված բուհում իրականացվող գործընթացներից նրանց բավարարվածության ապահովմանը, խնդիրների վերհանմանը, ինչպես նաև համապատասխան առաջարկությունների ներկայացմանը: Ուսանողական կառույցների կողմից ուսանողների կարիքների վերհանման ներդրված մեխանիզմներից են. 1. Էլեկտրոնային և թղթային հարցումներ: 2. Ուսանողական խորհրդակցություններ, քննարկումներ: 3. «Հաղորդագրության տուփեր»-ի, «Վստահության արկղիկ»-ի կիրառում: 4. ԳՊՀ կայքէջի «Առցանց դիմումներ»-ի հարթակի գործարկում: 5. ԳՊՀ ուսանողական կառույցների աշխատանքներում սոցիալական մեդիայի հնարավորությունների օգտագործում:

					6. ԳՊՀ Learn.gsu էլեկտրոնային ուսուցման համակարգի գործարկում, ուսանող-դասախոս կապի ապահովում: **Հիմք՝** 1. ԳՊՀ գործունեության հաշվետվություն և ինքնավերլուծության զեկույցներ՝ https://gsu.am/hy/%d5%b0%d5%a1%d5%b7%d5%be%d5%a5%d5%bf%d5%be%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/
	4.3.ՈՒԽ և ՈՒԳԸ գործունեության ակտիվացում ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերում:	4.3.1.	Ուսանողական կառույցների կողմից բարձրացված և լուծումներ ստացած հարցերի քանակի աճ:	2023-2024 ուստարի	ԳՊՀ-ում ուսանողական կյանքի ակտիվության և ուսանողական կառույցների արդյունավետ գործունեության արդյունքում ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի կողմից բարձրացված և լուծումներ ստացած հարցերի քանակի աճ է գրանցվել, ինչը պայմանավորված է Համալսարանի և ՈՒԽ-ի, ՈՒԳ ընկերության միջև համագործակցության ակտիվացմամբ: Այս համագործակցության, ուսանողների կարիքների շարունակական վերհանման արդյունքում ուսանողական կառույցների կողմից մշակվել են համապատասխան առաջարկներ՝ ուղղված ԳՊՀ ստորաբաժանումներին, ղեկավար անձնակազմին: Արդյունքում՝ ուսանողական կառույցների կողմից բարձրացված խնդիրները ստացել են իրենց լուծումները, հետևյալ հիմնական ուղղություններով. 1. Ֆինանսական աջակցություն ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխա-ուսանողներին, ակադեմիական առաջադիմության բարձր ցուցանիշներ արձանագրած ուսանողներին: 2. ՄԿԾ-ների ուսումնական պլանների վերանայում: 3. ՄԿԾ-ների դասավանդման, ուսումնառության գնահատման մեթոդների վերանայում: 4. Կրթական միջավայրի բարելավում՝ համակարգչային լսարանների թվաքանակի ավելացում, մասնագիտական գրականության ֆոնդի համալրում:

					5. Պրակտիկաների կազմակերպման ընթացքի, տևողության և ուսումնական պլանում դրա տեղի վերանայում: 6. Աշխատանքնահեն ուսուցման կարևորում և այդ ուղղությամբ միջոցների ձեռնարկում: 7. Հետազոտական աշխատանքների թեմաների վերանայում: **Հիմք՝** 1. ԳՊՀ գործունեության հաշվետվություն և ինքնավերլուծության զեկույցներ՝ https://gsu.am/hy/%d5%b0%d5%a1%d5%b7%d5%be%d5%a5%d5%bf%d5%be%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/
	4.4.ՈՒԳԸ ինքնուրույնության մակարդակի բարձրացում, գիտաժողովներին մասնակցության ակտիվացում, ամբիոնների և ուսանողների կապի ամրապնդում:	4.4.1.	ՈՒԳ ընկերության իրականացրած ծրագրերի քանակի աճ, ԳՊՀ գիտաժողովներին ուսանող-դասախոս համատեղ հոդվածների քանակի աճ, ուսանողական գիտաժողովներին մասնակցած ուսանողների թվի աճ:	2023-2024թթ.	ԳՊՀ ՈՒԳ ընկերությունը ակտիվ դեր է խաղում ուսանողների գիտական հետաքրքրությունների խթանման գործում՝ կազմակերպելով տարբեր միջոցառումներ՝ միտված ուսանողների գիտահետազոտական կարողությունների զարգացմանը: Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ-ում ուսանողների գիտական ակտիվությունը նկատելի աճ է գրանցել մի շարք ուղղություններով. 1. **Ներհամալսարանական, հանրապետական, միջազգային գիտաժողովներին մասնակցության թվաքանակի աճ՝** 2021-2022 ուստարվա համեմատությամբ հաշվետու ուստարիներին ԳՊՀ ուսանողները մասնակցել են կրկնակի թվաքանակով գիտաժողովի: 2. **Գիտաժողովներին ուսանող-դասախոս համատեղ հոդվածների քանակի աճ՝** 2021-2022 ուստարվա համեմատությամբ հաշվետու ուստարիներին ԳՊՀ դասախոս-ուսանող համատեղ կրկնակի թվաքանակով հոդվածներ՝ ավելի քան 20: 3. **Ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի քանակի աճ՝** 2021-2022 ուստարվա

					համեմատությամբ հաշվետու ուստարիներին ԳՊՀ ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորման ու զարգացման նպատակով իրականացվել են առցանց և անցանց սեմինարներ, սեմինարներ և հանդիպումներ ուսանողական խմբերի հետ՝ նվիրված գիտահետազոտություն կատարելու մեթոդաբանության ներկայացմանը: 4. **«Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթին ԳՊՀ ուսանողների մասնակցության աճ՝** ԳՊՀ ուսանողներն ամեն տարի մասնակցում են «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթին և ՀՀ բուհական համակարգում ԳՊՀ-ն հաղթող ճանաչված ուսանողների հարաբերական թվով տարիներ շարունակ գրավում է առաջին տեղը: **Հիմք՝** 1. ԳՊՀ գործունեության հաշվետվություն և ինքնավերլուծության զեկույցներ՝ https://gsu.am/hy/%d5%b0%d5%a1%d5%b7%d5%be%d5%a5%d5%bf%d5%be%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/
	4.5. Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի /Կենտրոն/ միջոցով աշխատանքի ընդունված շրջանավարտների թվի աճ:	4.5.1.	Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի առանձնացում ԱՔԲ-ից, ինքնուրույն աշխատանքի ապահովում:	2023թ.	Հիմք ընդունելով շահակիցների առաջարկությունները ԳՊՀ-ի վարչարարության և կառավարման գործընթացները բարելավելու վերաբերյալ և ելնելով այդ ուղղությամբ ԳՊՀ գիտական խորհրդի 2024 թվականի հունվարի 12-ի որոշումից՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի 2024 թվականի հունվարի 27-ի թիվ 4 որոշմամբ հաստատվել է «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2024 թվականի նոր կառուցվածքը, որտեղ համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը առանձնացվել է որպես ԱՔԲ-ից դուրս ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանում:
	4.6. Ուսանողների ակտիվ մասնակցություն համալսարանի կառավարման,	4.6.1.	Ուսանողական կառույցների համացանցային կայքին կից ուսանողական գործունեության ակտիվացմանը միտված	2023թ.	ԳՊՀ ՈՒԽ և ՈՒԳ ընկերության համացանցային կայքում գործում է հարթակը, որի նպատակն է բացահայտել ԳՊՀ ուսանողների ստեղծարար կարողությունները, հետաքրքրությունների շրջանակը, խրախուսել և

	որոշումների ընդունման գործընթացներին:		գաղափարների արտահայտման հարթակ:		հնարավորությունն ստեղծել ուսանողներին ներկայացնելու իրենց գաղափարները, առաջարկելու ծրագրեր, նախագծեր՝ ԳՊՀ-ում և դրանից դուրս ուսանողական առօրյան ավելի հետաքրքիր կազմակերպելու համար: **Հիմք՝** 1. ԳՊՀ ենթակայքեր՝ https://gsu.am/hy/%d5%a3%d5%ba%d5%b0-%d5%a5%d5%b6%d5%a9%d5%a1%d5%af%d5%a1%d5%b5%d6%84%d5%a5%d6%80/
5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ Գնահատել ՊԴԿ բեռնվածության արդյունավետությունն ու վտանգները և իրականացնել բարելավումներ, ՊԴԿ վերապատրաստումները պայմանավորել ՄԿԾ-ների դասավանդման համար առաջնահերթ կարիքներով՝ կարևորելով նաև արտաքին մասնագիտական վերապատրաստումները, ինչպես նաև միջազգայնացումը, հստակեցնել ՊԴ կազմին ներկայացվող պահանջները՝ ըստ կրթական աստիճանների:					
5.	5.1. Նոր դասախոսների ներգրավում: գործող ՊԴԿ ակադեմիական ծանրաբեռնվածության թեթևացում:	5.1.1.	Մասնագիտական կրթական ծրագրերի պահանջների հաշվառմամբ դասախոսական կազմի պլանավորում՝ նոր դասախոսների ներգրավմամբ:	2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակ	ԳՊՀ-ում մասնագիտական կրթական ծրագրերի պահանջների հաշվառմամբ ՊԴ կազմի պլանավորումը և նոր դասախոսների ներգրավումն իրականացվում է հետևյալ ընթացակարգով. 1. Կրթական ծրագրերի պահանջների ուսումնասիրում և գնահատում: 2. ՊԴ կազմի պլանավորում: 3. Հիմնական ՊԴ կազմի համար վերապատրաստման ծրագրերի իրականացում: 4. Նոր դասախոսների ներգրավում: 5. ԳՊՀ շրջանավարտների գիտամանկավարժական աշխատանքային առաջխաղացմանն աջակցում: Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ ՄԿԾ-ներում սահմանված պահանջների հաշվառմամբ պլանավորվել են ամբիոնների ՊԴ կազմերը, որոնցում մինչև 45 տարեկանները կազմում են ընդհանուրի 37%-ը, ինչը բարձր է միջին հանրապետական ցուցանիշից:
		5.1.2.	1. ՊԴ կազմի ակադեմիական ծանրաբեռնվածության գնահատման կառուցակարգեր: 2.ՊԴ կազմի ակադեմիական կարիքների վերհանման մեխանիզմների գործարկում:	2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակ	1. ԳՊՀ ՊԴ կազմի ակադեմիական ծանրաբեռնվածության գնահատման կառուցակարգերը կարևոր հենանիշ են բուհում ուսումնական գործընթացի արդյունավետության և կրթության որակի ապահովման համար: Բուհում կիրառվող կառուցակարգերը նպատակ ունեն գնահատել դասախոսների կատարած աշխատանքը,

					ապահովել ակադեմիական ծանրաբեռնվածության հավասարակշռումը և օգնել համապատասխան ակադեմիական ծանրաբեռնվածության և աշխատավարձի ձևավորմանը: ԳՊՀ ՊԴ կազմի ակադեմիական ծանրաբեռնվածության գնահատման կառուցակարգերը ներառում են հետևյալ փուլերը և բաղադրիչները՝ 1. Ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվառում առկա ուսուցման բաժիններում: 2. Ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվառում հեռակա ուսուցման բաժիններում: 3. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարում: 4. Ուսումնական, մանկավարժական, արտադրական, նախաավարտական, գիտամանկավարժական, գիտահետազոտական պրակտիկաների ղեկավարում, օրագրերի, բնութագրերի և հաշվետվությունների ստուգում և ընդունում: **Հիմք՝** 1. ԳՊՀ 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմեր: 2. ԳՊՀ ՊԴ կազմի ակադեմիական կարիքների վերհանման մեխանիզմների գործարկումը կարևոր քայլ է բուհում կրթության որակի ապահովման և ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար: Դրանց կիրառման արդյունքում բացահայտվում են դասախոսների ակադեմիական կարիքները, գնահատվում, այնուհետև մշակվում են դրանց բավարարմանը միտված բարելավման ուղիներ: ԳՊՀ ՊԴ կազմի ակադեմիական կարիքների վերհանման մեխանիզմները ներառում են հետևյալ փուլերը՝ 1. ԳՊՀ-ում առկա կրթական, հետազոտական միջավայրից դասախոսների բավարարվածության գնահատման հարցաթերթի գործարկում, արդյունքների վերլուծություն և համապատասխան միջոցների ձեռնարկում: Կլոր-սեղան,

					նպատակային /ֆոկուս/-խմբերի հետ քննարկումներ: 2. ՄԿԾ-ների դասավանդման առաջնահերթությունների, դասախոսների ակադեմիական կարիքների հաշվառմամբ մասնագիտական, մեթոդական վերապատրաստումների պլանավորում, անցկացում: 3. ՊԴ կազմին ներբուհական, հանրապետական, միջազգային գիտաժողովներին, ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցության խրախուսում: 4. Դասախոսների կարիքների հաշվառմամբ ակադեմիական ռեսուրսների հասանելիության ապահովում: **Հիմք՝** 1. Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների մասնագիտական որակների գնահատման և բարձրացման քաղաքականության մշակման ու իրականացման ընթացակարգ (փոփոխություններով): 2. Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի իրականացման կանոնակարգ (փոփոխություններով): 3. ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման ձեռնարկ: 4. Շահակիցների պահանջների հաշվառմամբ ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ընթացակարգ (փոփոխություններով):
	5.2. ՊԴ կազմի պարբերաբար գնահատման կառուցակարգերի	5.2.1	1.ՊԴ կարիքների վերհանման արդյունքում վերապատրաստված դասախոսների թվի աճ:	2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակ	1. Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է վերապատրաստում անցած դասախոսների թվաքանակի աճ:

	արդյունքում խրախուսված դասախոսների քանակի աճ: ԳՊՀ դասախոսների վարկանիշի աստիճանական աճ:		2.ՊԴ կազմի պարբերաբար գնահատման տարբեր գործիքների արդյունավետության ապահովում, խորքային վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրների լուծում: ՊԴ կազմի ատեստավորման գործընթացի իրականացում:		ԳՊՀ ՊԴ կազմի ակադեմիական կարիքների վերհանման արդյունքում ԳՊՀ դասախոսները վերապատրաստումներ են անցել ինչպես բուհում, այնպես էլ բուհից դուրս՝ մինչբուհական համագործակցության, ակադեմիական շարժունության միջազգային ծրագրերի շրջանակներում: ԳՊՀ ՊԴ կազմի գնահատումն առավել արդյունավետ իրականացնելու համար կիրառվում են գնահատման մի շարք գործիքներ՝ 1. դասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատում, 2. դասալսումների անցկացում, 3. դասախոսական համապանակի ուսումնասիրում, 4. դասախոսի գործունեության գնահատում շահակցների (ուսանողներ, շրջանավարտներ) շրջանում անցկացվող հարցումների միջոցով, 5. խրախուսման մեխանիզմների կիրառում: ՊԴ կազմի բազմակողմանի մոտեցմամբ փաստահենք գնահատումների և վերլուծությունների արդյունքում վերնայավել են ԳՊՀ ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը, ԳՊՀ-ում իրականացվող բոլոր ՄԿԾ-ների ուսումնական պլաններում ներառված լսարանային ժամերը, ինչի արդյուքնում գրանցվել է գործող ՊԴ կազմի ակադեմիական ծանրաբեռնվածության թեթևացում: Գնահատումների և վերլուծությունների արդյունքում բարելավվել են Համալսարանի ենթակառուցվածքները՝ լսարանները համալրվել են տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաներով, թարմացվել է կահույքը, վերանորոգվել է հանրակացարանը, փոխվել են դասախոսների հանգստի սենյակների կահույքը, անկողնային, խոհանոցային և այլ անհրաժեշտ պարագաները: **Հիմք՝** 1. ԳՊՀ գործունեության հաշվետվություն և ինքնավերլուծության զեկույցներ՝ https://gsu.am/hy/%d5%b0%d5%a1%d5%b7%d5%be%d

					5%a5%d5%bf%d5%be%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/
	5.3. Գործող բոլոր մասնագիտությունների վերանայված ՄԿԾ-ներ:	5.3.1.	Բակալավրի և մագիստրատուրայի կրթական աստիճանների բոլոր ՄԿԾ-ներում դասավանդողներին ներկայացվող հստակեցված պահանջներ:	2026թ. ուստարվա 2-րդ կիսամյակ	ԳՊՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերում սահմանվել և ներառվել են տվյալ ծրագրերում դասավանդող դասախոսների մասնագիտական, անձնային և մանկավարժական որակներին ներկայացվող հստակ պահանջներ: Գործընթացը կրում է շարունակական բնույթ և պարբերաբար վերանայվում է կրթական ծրագրերի արդիականացման շրջանակներում:
6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1. Ապահովել գիտահետազոտական գործունեության պլանավորման և իրականացման համակարգված մոտեցում՝ այդ թվում հստակեցնելով գործընթացների կառավարման համակարգը, հետազոտություններին աջակցության և ֆոնդահայթայթման գործընթացները: 2.Զարգացնել դասախոսական կազմի՝ հետազոտական մեթոդների տիրապետման կարողությունները, ինչպես նաև ուսանողների հետազոտական կարողությունները: 3. Ակտիվացնել առկա արտաքին կապերը միջազգայնացման ուղղությամբ:				
6.	6.1.Պլանավորված գիտահետազոտական գործունեության իրականացում՝ արդիականացված թեմատիկ ուղղություններով:	6.1.1.	Մշակված գիտահետազոտական երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլաններ, դրանց մշտադիտարկման պլաններ:	2023-2024թթ.	ԳՊՀ 2023-2027թթ. ռազմավարական ծրագրում որպես գերակա ուղղություն է սահմանվել գիտահետազոտական, նորարարական ուղղությունը: ՌԾ երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլաններում այս գերակա ուղղության համար նշվել են նպատակներն ու խնդիրները, մշակվել գործողությունների քանակական և որակական առաջընթացի գնահատման արդյունավետության ցուցիչները: Հաշվետու ժամանակահատվածում հաստատվել է Գավառի պետական համալսարանի 2023-2027 թվականների գիտահետազոտական գործունեության շրջանակը՝ ներառելով ՀՀ Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունների հաշվառմամբ ամբիոնների գիտահետազոտական գործունեության արդիականացված թեմատիկ ուղղություններ: ԳՊՀ 2023-2027 թվականների գիտահետազոտական գործունեության շրջանակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://gsu.am/wp-content/uploads/2024/11/6%E2%80%A46-%D4%B1%D5%B4%D5%A2%D5%AB%D5%B8%D5%B6%D5%B

					6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf
		6.1.2	Արդիականացված գիտական ուղղություններով իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքներով՝ բարձր հղման ցուցիչ ունեցող գիտական պարբերականներում հրապարակումների թվի աճ:	2022-2027թթ.	ԳՊՀ դասախոսների գիտական հետազոտությունների, հեղինակած հոդվածների, մենագրությունների, դասագրքերի, ԳՊՀ դասախոսների՝ միջազգային և հանրապետական գիտաժողովներին մասնակցության, կազմակերպած միջոցառումների մշտադիտարկման արդյունքների վերլուծությունները վերջին երեք ուսումանկան տարիների համար հետևյալն է. 2022-2023 ուստարի՝ 1 դասագիրք, 6 մենագրություն, 4 ուսումնամեթոդական ձեռնարկ, 123 հոդված, 4 զեկուցումների թեզիս: 2023-2024 ուստարի՝ 2 դասագիրք, 9 մենագրություն, 2 նյութերի ժողովածու, 4 ուսումնամեթոդական ձեռնարկ, 105 հոդված, 7 զեկուցումների թեզիս, 1 գյուտ: 2024-2025 ուստարի՝ 6 դասագիրք, 9 մենագրություն, 8 ուսումնամեթոդական ձեռնարկ, 128 հոդված, 6 գյուտ: Արդյունքում՝ երեք ուսումնական տարիների ընթացքում ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կրապարակվել է 9 դասագիրք, 24 մենագրություն, 8 ուսումնամեթոդական ձեռնարկ, 2 նյութերի ժողովածու, 356 հոդված, 7 գյուտ: Բարձր հղման ցուցիչ ունեցող գիտական պարբերականներում տպագրվել է 28 գիտական հոդված: Վերլուծությունները ցույց են տալիս, որ նկատվել է հարաբերական աճ նախորդ ժամանակահատվածի համեմատ: Բարձրացել է համալսարանի գիտական ճանաչելիությունը:
		6.2.2.	Հետազոտությունների ֆինանսավորման նոր աղբյուրներ:	2022-2027թթ.	1. Հաշվետու ժամանակահատվածում Համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության ամբիոնում իրականացվել է ՀՀ գիտական կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Սասունցի Դավիթ» էպոսը և եվրոպական էպիկական ավանդույթը»

					թեմայի ուսումնասիրությունը: Այդ թեմայի շրջանակներում հայոց լեզվի և գրականության ամբիոնի կողմից անցկացվել է միջազգային գիտաժողով՝ «Բանահյուսություն և գրականություն» ընդհանուր խորագրով (10-11 հունիսի, 2023թ.), որին մասնակցել են Գավառի պետական համալսարանի, Հայաստանի Հանրապետության այլ բուհերի ու գիտական կազմակերպությունների, ինչպես նաև արտերկրի հայտնի գիտնականներ: Գիտական զեկուցումներ են ներկայացրել նաև ԳՊՀ հայոց լեզվի և գրականության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի 2 ուսանողներ: Գիտաժողովի նյութերը հրապարակվել են առանձին ժողովածուով: 2. ԳՊՀ դասախոսները՝ որպես համապատասխան ոլորտների մասնագետ- գիտնականներ ներգրավված են բարձրագույն ուսումնական այլ հաստատությունների գիտահետազոտական դրամաշնորհային տարբեր ծրագրերում, օրինակ՝ 2.1.Հայոց լեզվի և գրականության ամբիոնի 1 դասախոս ընդգրկված է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 21T-6B027 ծածկագրով «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» թեման իրականացնող խմբի կազմում: 2.2.Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 1 դասախոս ընդգրված է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային կարգերի վերագնահատման մեթոդիկայի մշակումը և հողային ռենտայի հաշվառումը» թեման իրականացնող խմբի կազմում: 2.3. Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիական ամբիոնի վարիչը ընդգրկված է Պետության պահանջարկի վրա հիմնված (Demand driven) գիտահետազոտական նախագծեր 2025» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտահետազոտական նախագծի շրջանակում «Հողածածկույթի փոփոխությունների հայտնաբերում օդային պատկերներից՝ հիմնարար

					տեսողական մոդելների կիրառմամբ. արդյունավետ համակարգ Հայաստանի համար» նախագիծն իրականացնող խմբի կազմում: ԳՊՀ դասախոսները հանդես են գալիս որպես թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավարներ, գրախոսներ, անդամակցում գիտական աստիճաններ շնորհող բնական և հասարակական գիտությունների տարբեր ուղղվածությամբ մասնագիտական խորհուրդներին:
	6.3. Դասախոսների և ուսանողների շրջանում հետազոտական ժամանակակից մեթոդներին, ինչպես նաև մասնագիտական օտար լեզուն տիրապետողների թվի աճ:	6.3.1	Հետազոտական արդի մեթոդների և մասնագիտական օտար լեզվի վերապատրաստումներին մասնակցած պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների թվաքանակի հարաբերական աճ:	2023-2026թթ.	Համալսարանում շարունակաբար իրականացվում են պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ: ԳՊՀ դասախոսները և ուսանողները մասնակցում են հետազոտական արդի մեթոդներին նվիրված տարբեր վերապատրաստումների, սեմինարների, այլ ձևաչափերով հանդիպումների, քննարկումների: Օրինակ՝ 1. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմի համար կազմակերպվել են օտար լեզուների ուսուցման արդյունավետ մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ վերապատրաստումներ: 2. Վերապատրաստում են անցել ԳՊՀ դասախոսներ և ուսանողներ, ովքեր ռուս գործընկերների և ուսանողների հետ առցանց ձևաչափով մասնակցել են միջազգային գիտամեթոդական սեմինարի՝ «Օտար լեզուների դասավանդման ակտիվ մեթոդներ՝ հեռավար ուսուցման ձևաչափով» թեմայով: 3. Օտար լեզվի և գրականության ամբիոնի կողմից դասախոսների, ուսուցիչների, մագիստրոսների համար անցկացվել է ‹‹Հեռավար ձևաչափով օտար լեզուների դասավանդման ակտիվ մեթոդները›› թեմայով առցանց մեթոդական սեմինար: 4. Գավառի պետական համալսարանի, Վոլգա-տարածաշրջանի կառավարման ինստիտուտի (Սարատով, Ռուսաստանի Դաշնություն) և “Talk & Travel” կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ

					անցկացվել է «Հակակոռուպցիոն մտածելակերպի ձևավորումը ուսանողական միջավայրում» թեմայով միջբուհական գիտական սեմինար: 5. Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի և Գավառի պետական համալսարանի համագործակցության շրջանակներում ԳՊՀ-ում անցկացվել է վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոսները: 6. ԱՄՆ պետդեպարտամենտի «Fullbright» փոխանակման ծրագրի մասնակցի, բիզնես անգլերենի դասախոսի կողմից անցկացվել է «Օտար լեզվի դասավանդման նորագույն մեթոդներ» թեմայով վերապատրաստում, որի շրջանակներում անդրադարձ է կատարվել նախագծային ուսուցման դերին անգլերենի՝ որպես օտար լեզվի յուրացման հարցում, գործընկերային գնահատմանը՝ որպես դասավանդման որակի բարելավման միջոց, թվային նոր գործիքակազմի կիրառմամբ փոխներգործուն և ուսանողակենտրոն լսարանի ապահովմանը: Վերապատրաստման դասընթացին մասնակցել են ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ, Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչներ, ուսանողներ: 7. Հասարակական գիտությունների ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Մանկավարժական հաղորդակցում» թեմայով վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ, մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչներ, ուսանողներ: 8. Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկակական գիտությունների ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Արհեստական բանականության (ԱԲ) գրագիտություն, գեներատիվ ԱԲ կիրառություններ (ChatGPT, Gemini, Canva և այլն)»

					թեմայով վերապատրաստումներ, որին մասնակցել են ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ: 9. Կրթության փորձագետի կողմից անցկացվել է «Փոխներգործուն (ինտերակտիվ) կրթության մեթոդներ և գործիքներ» թեմայով վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ, տարածաշրջանի հանրակրթական դպրոցների ուսուցիչներ: 10. Իրավագիտության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է գենդերային հավասարության ապահովման սահմանադրական և միջազգային իրավական հիմքերին ու կառուցակարգերին նվիրված վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ: Վերապատրաստման վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հասանելի է Գավառի պետական համալսարանի պաշտոնական կայքում՝ https://gsu.am/hy/?s=%D5%A3%D5%A5%D5%B6%D5%A4%D5%A5%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6 11. ԳՊՀ-ում զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության ուղղությամբ ԳՊՀ աշխատակիցների համար անցկացվել են վերապատրաստման դասընթացներ՝ հետևյալ թեմաներով՝ «Պետության տնտեսության զորահավաքային նախապատրաստություն և զորահավաք», «Մարդկային ռեսուրսների զորահավաքային ներուժը»: Դասընթացներին մասնակցել են ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ: Վերապատրաստման վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հասանելի է Գավառի

					պետական համալսարանի պաշտոնական կայքում՝ https://gsu.am/hy/%d5%a3%d5%ba%d5%b0-%d5%b8%d6%82%d5%b4-%d5%af%d5%a1%d5%b5%d5%a1%d6%81%d5%a1%d5%be-%d5%be%d5%a5%d6%80%d5%a1%d5%ba%d5%a1%d5%bf%d6%80%d5%a1%d5%bd%d5%bf%d5%b4%d5%a1%d5%b6-%d5%a4%d5%a1%d5%bd%d5%a8%d5%b6/ Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է և ներդրվել է «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի առարկայական ծրագիրը, որը ներառվել է բակալավրիատի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերում, վերջնարդյունքները սահմանելիս կարևորվել է ուսանողների մոտ հետազոտական հմտությունների, վերլուծելու և եզրահանգելու կարողությունների զարգացումը: Վերլուծությունները ցույց են տալիս, որ նախորդ ժամանակահատվածի համեմատ այս ոլորտում գրանցվել է հարաբերական աճ:
		6.3.2.	Գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հաշվառմամբ խրախուսված դասախոսների թվաքանակի հարաբերական աճ:	2023-2026թթ.	Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ դասախոսները որպես հրավիրյալ դասախոսներ թեմատիկ դասախոսությունների շարքով հանդես են եկել ՌԴ Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանում, Պովոլժիեի կառավարման ինստիտուտում, ինչպես նաև Բելառուսի Հանրապետության Մինսկի պետական լեզվաբանական համալսարանում: Բարեխիղճ աշխատանքի համար 2023 թ. խրախուսվել են ԳՊՀ 9 դասախոսներ, 2024թ՝. 13 դասախոսներ, 2025թ. 13 դասախոսներ: Այս ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

	6.4. Միջազգային գիտագործնական բնույթի ծրագրերին անդամակցում և համատեղ գիտագործնական ծրագրերի քանակի աճ:	6.4.1.	Միջազգային գործընկերների հետ համատեղ իրականացված գիտագործնական ծրագրերի աճ:	2023-2027թթ.	2023թ. մայիսի 5-6-ին զուգակցված՝ առկա-առցանց ձևաչափով կայացել է Գավառի պետական համալսարանի հիմնադրման 30-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, որին 11 մասնագիտական բաժանմունքներում մասնակցել են 7 երկրի 40-ից ավելի բուհերի և գիտահետազոտական հաստատությունների 100-ից ավելի ներկայացուցիչներ, այդ թվում՝ ՌԴ և Բելառուսի Հանրապետության գործընկեր բուհերի դասախոսներ: 2024թ. մայիսի 3-ին զուգակցված՝ առկա-առցանց ձևաչափով կազմակերպվել է ԳՊՀ 27-րդ գիտաժողովը: Գիտաժողովի ծրագրում ներառվել էին բնական և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններին նվիրված 108 զեկուցում՝ ներկայացված 158 հեղինակի և համահեղինակի կողմից: Մասնակիցները 30-ից ավելի բուհերի, գիտահետազոտական ինստիտուտների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ էին: Գիտաժողովի աշխարհագրությունը լայն էր և կրում էր միջազգային բնույթ՝ ներառելով գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձանց ՀՀ-ից, ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Բելառուսի Հանրապետությունից: Գիտական զեկուցումներով հանդես եկան Գավառի պետական համալսարանի գործընկեր բուհերի՝ Ալթայի պետական մանկավարժական համալսարանի, Վորոնեժի պետական համալսարանի, Պովոլժիեյի կառավարման ինստիտուտի, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի, Բելառուսի պետական տնտեսագիտական համալսարանի և այլ բուհերի դասախոսներն ու ասպիրանտները:

					Հաշվետու ժամանակահատվածում համագործակցության շրջանակներում Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի Խոսքի լեզվաբանության և հաղորդակցության տեսության ամբիոնի դոկտորանտը ԳՊՀ-ում հանդես է եկել դասախոսությունների շարքով՝ կիրառելով իր դոկտորական ատենախոսությունում առաջարկվող ուսուցման և ուսումնառության նորարարական մեթոդները: ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ 2025թ. ապրիլի 5-ին անցկացվել է ԳՊՀ ուսանողական միջազգային առցանց գիտաժողով, որին մասնակցել են 5 երկրներից ավելի քան 20 բուհերի 87 ուսանողներ: Ներկայացվել են զեկուցումներ ՀՀ, ՌԴ, Լեհաստանի, Բելառուսի, Ուզբեկստանի առաջատար համալսարաններից: Լավագույն զեկուցումներն ակադեմիկոս Մ.Դ. Միլիոնշչիկովի անվան Գրոզնիի պետական նավթային տեխնոլոգիական համալսարանի ֆինանսավորմամբ տպագրվել են ուսանողական գիտական հոդվածների ժողովածուում: 2025 թ. ապրիլի 30-ին ԳՊՀ-ում կայացավ մշակույթի և արվեստի դերի քննարկմանը նվիրված միջազգային գիտական նստաշրջան՝ ՀՀ, Լեհաստանի, ՌԴ և Բելառուսի համալսարանների պրոֆեսորադասախոսական կազմի և գիտաշխատողների մասնակցությամբ: 2025 թ. մայիսի 3-ին և 4-ին կազմակերպվել է ԳՊՀ 28-րդ գիտաժողովը, որը նվիրված էր բուհի հիմնադրման 32-րդ տարեդարձին: Գիտաժողովին մասնակցության հայտ էին ներկայացրել 35 բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների 129 ներկայացուցիչներ՝ գիտության դոկտորներ,

					թեկնածուներ, ինչպես նաև երիտասարդ հետազոտողներ, որոնք հանդես եկան որպես 102 գիտական զեկուցման հեղինակներ և համահեղինակներ:
		6.4.2.	Միջազգային բարձր հղման ցուցիչ ունեցող գիտական պարբերականներում հրատարակված հոդվածներ՝ համագործակցության ծրագրերի շրջանակներում:	2023-2027թթ.	Հրատարակվել են ստորև ներկայացված 9 գիտական հոդվածների ժողովածուները՝ 1. 14-րդ գիտական հոդվածների ժողովածու՝ 2023թ. 2. 15-րդ գիտական հոդվածների ժողովածու՝ 2023թ., 3. Բանահյուսություն և գրականություն միջազգային գիտաժողովի նյութեր՝ 2023թ., 4. 16-րդ գիտական հոդվածների ժողովածու՝ 2024թ., 5. 17-րդ գիտական հոդվածների ժողովածու՝ 2024թ., 6. 18-րդ գիտական հոդվածների ժողովածու՝ 2025թ., 7. 19-րդ գիտական հոդվածների ժողովածու՝ 2025թ., 8. 20-րդ գիտական հոդվածների ժողովածու՝ 2025թ., 9. ԳՊՀ ուսանողական միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 2025թ.: Աշխատանքներն ընթացքի մեջ են:
7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 1. Աշխատակիցների տարբերակված խրախուսում չի իրականացվում, ինչը թույլ կտար ապահովել ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում և աշխատողների ավելի թիրախային խրախուսումներ: 2.Տարբեր հարթակներով դասատվությունն իրականացնելը, ինչպես նաև տարբեր հարթակներում ներկայություն ունենալը կարող է լրացուցիչ ծանրաբեռնվածություն առաջացնել ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների շրջանում: 3. Այլ աղբյուրներից բյուջեի համալրման հնարավորությունները սահմանափակ են: 4. Գրադարանի գրքերի ֆոնդի մոտ 10%-ն է թվայնացվել, ինչը բավական ցածր ցուցանիշ է:					
7.	7.1. ԳՊՀ աշխատակիցների նյութական և մասնագիտական աջակցման ծրագրերի բազմազանեցում, խրախուսման առավել արդյունավետ և հասցեական	7.1.1.	1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմում մասնագիտական և մանկավարժական ուղղություններով վերապատրաստված ների հարաբերական թվի աճ:	2022-2023 ուստարվա ավարտին	ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման ծրագրերի և դրանց մասնակիցների քանակական աճի վերաբերյալ տվյալները ներկայացված է 6.3.1 կետում:
		7.1.2.	ԳՊՀ աշխատակիցների խրախուսման և գնահատման նոր կառուցակարգեր:	2024թ.	-

	համակարգի գործարկում:				
	7.2. Հեռավար ուսուցման միասնական համակարգի մշակում և գործարկում:	7.2.1.	Գործող համակարգերի ծրագրային թարմացում և զարգացում, դրանց հենքի վրա ընդհանուր միասնական հարթակի ստեղծում՝ ժամանակակից տեխնոլոգիական հնարավորություններով, նորարարական լուծումներով:	2024թ.	Կատարվել և ներկայումս ընթանում են աշխատանքներ էլեկտրոնային դեկանատի թարմացման ուղությամբ՝ մասնավորապես ընթանում են ակադեմիական տեղեկագրերի թվայնացման աշխատանքները: 2024-2025 ուստարում իրականացվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի առկա և հեռակա բաժիններում ուսանողների գիտելիքների գնահատման տեղեկագրերը կլինեն էլեկտրոնային՝ մշակված գնահատման համակարգի բազմագործոն բաղադրիչների ավտոմատ հաշվարկման և այլ հնարավորություններով:
		7.2.2.	Համալսարանի հեռավար ուսուցման համակարգի և դասախոսների կիրառած համակարգերի փոխկապակցում:	2024թ.	Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 16 մլն ՀՀ դրամ արժողությամբ համակարգչային տեխնիկայով վերազինվել են ԳՊՀ համակարգչային լսարանները, գրադարանները, արդիականացվել են վարչական և ուսումնաօժանդակ կազմին տրամադրվող գուքն ու տեխնիկան, ստեղծվել է համակարգչային նոր լսարան, որոշ լսարաններ համալրվել են ինտերակտիվ գրատախտակներով և լուսացրիչներով:
	7.3. ֆինանսական մուտքերի բազմազանեցում, կառավարման արդյունավետության գնահատման գործող մեխանիզմներ:	7.3.1.	Հանրային պահանջներին համապատասխան լրացուցիչ կրթական նոր ծրագրեր՝ հաշվի առնելով տնտեսության մասնավոր ու հանրային հատվածների, պետական կառավարման համակարգի կարիքները:	2024թ.	ԳՊՀ հանրային պատասխանատվության շրջանակում Գեղարքունիքի մարզի տարբեր մասնագիտական խմբերի համար իրականացվել են լրացուցիչ կրթական ծրագրեր, որոնք ապահովել են նաև լրացուցիչ ֆինանսական մուտքեր ԳՊՀ բյուջե՝ մասնավորապես 2023թ-ին որպես լրացուցիչ կրթական ծրագիր մշակվել և իրականացվել է հաշվապահների մասնագիտական որակավորման բարձրացման ծրագիր, որին մասնակցել են հանրային հատվածի կազմակերպություններում աշխատող ավելի քան 70 հաշվապահներ:
		7.3.2.	Հնարավոր գործընկերների և ներդրողների հետ համագործակցության արդյունքում համալսարանի համապատասխան տարածքների	2025թ.	2023, 2024, 2025 թթ. ընթացքում 14 պայմանագրերի հիման վրա իրականացվել է ԳՊՀ տարածքների, ռեսուրսների համատեղ օգտագործում գործընկերների հետ, որոնք հնարավորություն են տվել ապահովելու լրացուցիչ ֆինանսական մուտքեր:

			վարձակալության տրամադրում, ռեսուրսների համատեղ օգտագործում:		
		7.3.4.	Վերլուծված ֆինանսական ցուցանիշներ, որոնց կառավարումը կնպաստի ֆինասական ճիշտ պլանավորմանը և բյուջեի կառուցվածքի օպտիմալացմանը:	2025թ.	2023 թ. ֆինանսական ցուցանիշները վերլուծվել են, որոնց հիման վրա առաջարկվել և իրականացվել են ԳՊՀ կառուցվածքային փոփոխություններ, նույնանուն ՄԿԾ-ներ իրականացնող առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետները միավորվել են, հաստիքացուցակը և աշխատակազմերը օպտիմալացվել են, կատարվել է ռեսուրսների խնայողություն և արդյունավետ օգտագործում, իրականացվել է անվտանգության համակարգերի վերազինում /հակահրդեհային, տեսահսկման, անցակետի և այլն/: ԳՊՀ օպտիմալացված կառուցվածքը հաշվի առնելով՝ ձևավորվել և Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել է 2024թ-ի բյուջեն: 2025 թ. կատարվել է ռեսուրսների խնայողություն և արդյունավետ օգտագործում, իրականացվել է անվտանգության համակարգերի վերազինում /հակահրդեհային համակարգի միացում ՀՀ ՆԳՆ հերթապահ դիսպետչերային կենտրոնի հետ/: 2025 թ. ֆինանսական ցուցանիշները վերլուծվելով 2026թ-ի բյուջեով Հոգաբարձուների խորհրդի հաստատման է ներկայացվել 2026թ-ի բյուջեն, որով առաջարկվել է 2026թ-ին ԳՊՀ աշխատակիցների աշխատավարձերի բարձրացում, ինչպես նաև 2026թ-ի բյուջեով առաջարկվել է օպտիմալացնել, համալրել ռեսուրսները և բարձրացնել դրանց օգտագործման արդյունավետությունը:
	7.4. Հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից գրականության ապահովում:	7.4.1.	ՀՀ և օտարերկրյա գործընկեր բուհերի, գիտական հաստատությունների էլեկտրոնային գրադարաններից օգտվելու հնարավորության ապահովում, մշակված և ներդրված փոխկապակցման համակարգ:	2022-2023թթ.	Համալսարանի հետազոտական արդյունքների հրապարակման վերաբերյալ տեղեկատվությունը տրվել է 6.1.2. կետում:

		7.4.2.	Բուհի մասնագիտություններ ի գծով պահանջված՝ թվայնացված գրքերի առկայություն և ժամանակակից էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու հնարավորություն:	2024թ.	Համալսարանի էլեկտրոնային գրադարանը համալրվել է նոր թվայնացված մասնագիտական և գեղարվեստական գրքերով: ԳՊՀ էլեկտրոնային գրադարանում ներկայումս առկա է 500-ից ավելի անուն գրականություն:
8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 1. Համալսարանում առկա չեն հաշվետվողականության գնահատման ցուցանիշներ և մեխանիզմներ: 2. ԳՊՀ կայքէջում անհրաժեշտ տեղեկատվությունը եռալեզու ֆորմատով չի ապահովվում: 3. Չնայած այն հանգամանքին, որ համալսարանը իրականացնում է հասարակության հետ կապերի ձևավորման ուղղությամբ մի շարք միջոցառումներ, այնուհանդերձ դրանց մի մասը ուղղված է ուսանողների թվի մեծացմանը, այլ ոչ թե համալսարանի ձեռքբերումների և հնարավորությունների, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը:					
8.	8.1. Հանրության հետ կապի ապահովման, համալսարանի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության տրամադրման, համալսարանի ձեռքբերումների և հնարավորություններ ի, առավելություններ ի ներկայացմանը միտված ծրագրերի արդյունավետությունից արտաքին շահակիցների բավարարվածության աստիճանի աճ:	8.1.1.	Հետադարձ կապի արդյունավետության գնահատման կառուցակարգերի մշակում:	2022-2024թթ.	Գավառի պետական համալսարանում գործում է հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման, դրանց մասին իրազեկման, հասարակության հետ տարվող աշխատանքների իրականացման և հետադարձ կապի ապահովման կանոնակարգ, որի համաձայն ԳՊՀ որակի ապահովման բաժինն իրականացնում է հանրության հետ կապերի արդյունավետության գնահատումներ, կատարում վերլուծություններ և պատասխանատու ստորաբաժանմանը՝ ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնին ներկայացնում առաջարկություններ՝ հանրության հետ հետադարձ կապի բարելավման նպատակով:
	8.2. Համալսարանի միջազգային համագործակցային ծրագրերի քանակի աճ:	8.2.1.	1. Արտաքին գործընկերների և արտասահմանցի շահառուներին հասանելի եռալեզու կայք՝ համալրված անգլերեն, ռուսերեն նյութերով:	2022-2024թթ.	Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարարանը կնքել և վերակնքել է 10 միջինստիտուցիոնալ պայմանագիր՝ ԵՄ ‹‹Էրազմուս+›› միջազգային կրեդիտային շարժունության շրջանակում և ակտիվորեն իրականացնում է ակադեմիական շարժունության ծրագրեր եվրոպական առաջատար բուհերի

			2. Ակադեմիական շարժունություն ապահովելու համար անհրաժեշտ համագործակցա յին հարաբերություն ներ: 3. Հյուրընկալվող արտասահմանցի ուսանողների և դասախոսների համար գրավիչ ակադեմիական միջավայր, անհրաժեշտ ենթակառուցվածք ներ:		հետ: 2022-2024թթ. ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցել է 21 դասախոս և 21 ուսանող: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում գործընկեր եվրոպական բուհերին հղվում են ակադեմիական առաջարկներ, որոնց համաձայն հյուրընկալվող դասախոսները կարող են դասախոսել, ինչպես նաև վերապատրաստման դասընթացների մասնակցել ԳՊՀ հումանիտար ֆակուլտետի Անգլերեն լեզու և գրականություն բաժնում: Համադրական հենանշման տարբեր կառուցակարգերի կիրառմամբ քայլեր են իրականացվում ավելացնելու միջգիտակարգային, ինչպես նաև աշխատաշուկայում պահանջված մասնագիտական հմտություններ ու գիտելիքներ ձևավորող դասընթացների քանակի ավելացման ուղղությամբ: ԳՊՀ-ն անդամակցում է ԵՄ ‹‹ERASMUS+ T-GREEN›› ծրագրին, որը նախատեսում է համատեղ/կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրերի իրականացում գործընկեր հայաստանյան, իսկ այնուհետև նաև ԵՄ բուհերի հետ, ինչը կարող է նպաստել միջազգային ուսանողների թվի աճին: Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ-ն իրականացրել է 3 միջազգային գիտաժողովներ, որոնց նպատակն է միջազգային գիտական հանրությանը ներկայացնելու ԳՊՀ ակադեմիական ներուժը՝ խթանելու օտարերկրա դասախոսների հետ համագործակցային կապերը: Համալասարանի դասախոսները և ուսանողները մշտապես մասնակցում են միջազգային գիտաժողովների, սեմինար-քննարկումների /օրինակ՝ Կլոր սեղան՝ «Էթնոմշակութային հետազոտություններ» թեմայով, Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի հետ/, Գավառի պետական համալսարանում կայացավ ‹‹Բանահյուսություն և գրականություն›› խորագրով միջազգային գիտաժողովը, որին առկա և առցանց ձևաչափով մասնակցեց 100-ից ավելի անձ:

					Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հետաքրքիր միջազգային գիտաժողով՝ ‹‹Արվեստը որպես հոգևոր-մշակութային արժեքների զարգացման աղբյուր›› թեմայով: Գիտաժողովն անցկացվեց առկա-առցանց ձևաչափերով: Համալսարան ժամանեցին և առկա ձևաչափով գիտաժողովին մասնակցեցին ներկայացուցիչներ Բելառուսի, Ռուսաստանի, Լեհաստանի գործընկեր բուհերից: Կայացավ նաև ուսանողական հեռուստակամուրջ, որի ընթացքում զեկուցումներով հանդես եկան Գավառի պետական համալսարանի, Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի և Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի ուսանողներն ու դասախոսները: Համալսարանի տարածքն ամբողջությամբ ապահովված է համացանցային բարձր արագությամբ կապով, առկա են հեռահար դասընթացներ իրականացնելու անհրաժեշտ տեխնիկական պայմաններ, ինչը հնարավորություն է ընձեռում կազմակերպել միջազգային գործընկերների մասնակցությամբ միջոցառումներ՝ առցանց և անցանց ձևաչափերով: Համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժինն իր աջակցությունն է ցուցաբերում ուսանողներին և դասախոսներին՝ ակադեմիական փոխանակման ծրագրերին մասնկացության համար անհրաժեշտ տեղեկատվության և փաստաթղթերի հավաքագրման ուղղությամբ, բոլոր ամբիոններում աշխատում են օտար լեզվին տիրապետող ակադեմիական խորհրդատուներ, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են աջակցել հյուրընկալվող դասախոսին և ուսանողին՝ վերջիններիս նոր վայրում մասնագիտական, սոցիալական և մշակութային, ժամանցային կողմնորոշում ապահովելու նպատակով: Համալսարանին կից գործում է հանրակացարան, որը տրամադրում է անհրաժեշտ պայմաններ՝ հյուրերի կեցության համար:

					Համալսարանն ունի տրանսպորտային միջոցներ, որոնց միջոցով անհրաժեշտության դեպքում կարող են կազմակերպվել հյուրերի տեղափոխումը:
		8.2.2.	Միջազգային գործընկերների հետ համագործակցային կապերի ընդլայնում, համատեղ ծրագրերի քանակի աճ:	2022-2024թթ.	2024 թ.-ից ԳՊՀ-ն անդամակցում է նոր՝ ԵՄ ‹‹Էրազմուս+››-101193593 – «Virtual Voyages ERASMUS-EDU-2024-VIRT-EXCH» ծրագրին: Այն վիրտուալ փոխանակման նախագիծ է, որը բաղկացած է առցանց գործողություններից, որոնք նպաստելու են միջմշակութային երկխոսությանը, համագործակցությանը և ճկուն հմտությունների զարգացմանը: Դրանք հնարավորություն են տալիս երիտասարդ ուսանողներին՝ օգտվելու բարձրորակ միջազգային և միջմշակութային կրթությունից՝ առանց ֆիզիկական շարժունության: Սա ԳՊՀ համար նոր ծրագիր է, քանի որ նախկինում ԳՊՀ-ն մասնակցել և մասնակցում է ԵՄ ‹‹Էրազմուս+›› միջազգային կրեդիտային շարժունության և կարողությունների զարգացման ծրագրերին: Ծրագրում ընդգրկված գործընկերների հետ ԳՊՀ-ն ևս նախկինում չի ունեցել համագործակցության փորձ, այսինքն՝ ԳՊՀ եվրոպական գործընկեր բուհերի և այլ կազմակերպությունների շրջանակն ընդլայնվել է: Հաշվետու ժամանակահատվածում կնքվել է փոխըմբռնման հուշագիր՝ Եվրոպական Միության ‹‹ERASMUS+SMART CAFFES››, ‹‹CONNECT›› ծրագրերի անդամ ՀՀ բուհերի՝ Բրյուսովի անվան, Վանաձորի պետական համալսարանների և «Արմենիան Կոդ Ակադեմիա» (Armenian Code Academy) ընկերության միջև՝ բարձրագույն կրթության ոլորտում համագործակցության և համատեղ ծրագրերի իրականացման վերաբերյալ: Նպատակն է՝ համատեղել ջանքերը որակյալ կրթություն ապահովելու, ուսումնական, գիտահետազոտական, սոցիալ-մշակութային ծրագրեր կյանքի կոչելու, աշխատանքահեն կրթական գործընթաց կազմակերպելու, ուսանողների կարողությունները և հմտությունները զարգացնելու, բիզնես գաղափարների ձևակերպման և

					իրականացման վերաբերյալ վերապատրաստումներ անցկացնելու ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում կնքվել են համագործակցության հուշագրեր, պրակտիկայի պայմանագրեր և համաձայնագրեր ինչպես տարածաշրջանի, այնպես էլ միջազգային գործընկերների հետ: Համալսարանը անդամակցում է նաև ԵՄ «Էրազմուս+, Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի ապահովման գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) ստեղծում» (KPI4HE), ինչպես նաև «Էրազմուս+, Կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» (T-GREEN) եռամյա ծրագրերին:
	8.3. Համալսարանի ընձեռած հնարավորություններից, հաշվետվողականության և թափանցիկության ապահովման մեխանիզմից արտաքին շահակիցների բավարարվածության աճ:	8.3.1.	1. Համալսարանի ձեռքբերումների լուսաբանմանը և հաշվետվողականության ապահովմանը միտված միջոցառումների քանակի աճ: 2.ԳՊՀ-ի և գործատուների միջև կնքած համագործակցության հուշագրերի, պայմանագրերի քանակի աճ:	2024թ.	ԳՊՀ-ում գործում է գործունեության հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման կարգը, որի համաձայն Համալսարանն իր գործունեության բոլոր ուղղությունների մասին տեղեկատվություն հրապարակում է ԳՊՀ կայքի /www.gsu.am/ և սոցիալական կայքերի միջոցով՝ հանրությանն իրազեկելով իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի, վերապատրաստումների, լրացուցիչ կրթական ծրագրերի, գործունեության ընթացիկ արդյունքների, ներբուհական ակտերի՝ կանոնակարգերի և ընթացակարգերի, հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ֆակուլտետային խորհուրդների որոշումների, Համալսարանի տարեկան բյուջեի, գնումների գործընթացի, թափուր աշխատատեղերի, գիտահետազոտական աշխատանքների, միջազգային ծրագրերի և այլ գործընթացների վերաբերյալ:

9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ					
1.Բուհը նպատակ է դրել նաև դառնալ գրավիչ միջավայր օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններից ուսանողներ և դասավանդողներ ներգրավելու համար: Այս նպատակի իրագործման համար ևս կոնկրետ քայլերը կամ գործողությունների ծրագիրը կամ ռեալ իրագործման հնարավորությունն ու մարտահրավերները նկարագրված չեն, ուստի այս նպատակն առավելապես հռչակագրային բնույթի է: 2. Արտաքին կապերի և միջազգայնացման վերաբերյալ ընթացակարգերը հստակ չեն, և առկա է դրանք առավել մանրամասն նկարագրելու և թափանցիկ դարձնելու անհրաժեշտություն, ինչպես և՝ արտաքին կապերի հստակ նպատակադրման կամ թիրախավորման և արդյունքի գնահատման մեխանիզմի անհրաժեշտություն, որի պակասը կարող է վտանգել արտաքին կապերի և համագործակցության կայունությունը: 3. Բուհի համագործակցության շրջանակները լիարժեք չեն ապահովում ռազմավարական հավակնոտ նպատակները կրթական, հետազոտական, միջազգայնացման, շարժունության գործընթացների տեսանկյունից: Թույլ է գիտահետազոտական գործունեության ուղղությամբ համագործակցային շրջանակը, իսկ գործատուների հետ համագործակցությունն ուղղված է առավելապես պրակտիկաների կազմակերպմանը, ինչը թույլ չի տալիս լիարժեք օգուտներ քաղել հաստատված կապերից: 4. Բուհի նպատակներից է դառնալ գրավիչ միջավայր օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններից ուսանողներ և դասավանդողների ներգրավելու համար, մինչդեռ դեռևս շատ քիչ թվով դասախոսներ են պատրաստ դասավանդել անգլերենով:				
9.	9.1.Միջազգայնացման նոր ռազմավարական ծրագիր և դրանից բխեցված գործողությունների պլան:	9.1.1.	Արդյունավետության գնահատման քանակական և որակական ցուցիչների մշակում՝ ըստ միջազգայնացման նոր ռազմավարական ծրագրի հիմնական նպատակների և խնդիրների:	2023թ.	ԳՊՀ միջազգայնացման ռազմավարական նոր ծրագիրը բխում է ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի զ արգացման ռազմավարական ծրագրի (2023-2027թթ.) գործունեության հիմնական ուղղություններից: Միջազգայնացման նոր ռազմավարական ծրագրի կատարողականը արդյունավետորեն վերահսկելու և գնահատելու համար սահմանված քանակական և որակական ցուցիչները համապատասխանում են ԳՊՀ ՌԾ-ում և միջազգայնացման ռազմավարական ծրագրում նշված հիմնական նպատակներին և խնդիրներին:
	9.2. Արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման վերաբերյալ հստակեցված ընթացակարգեր:	9.2.1.	Վերանայված ընթացակարգերի արդյունավետության գնահատման և դրանց բարելավման մեխանիզմի ներդնում:	2023 թ.	ԳՊՀ ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության ծրագրերին մասնակցության գործընթացների, միջազգային ուսանոնողների ընդունելության ընթացակարգերի և այլ գործընթացների կարգավորման նպատակով աշխատանքներ են տարվում մշակելու և հաստատելու մի շարք ընթացակարգեր և կանոնակարգեր՝ այդ թվում. 1. Միջազգային գործընկերության էթիկայի և վարքագծի կանոններ, 2. Միջազգային ուսանողների ընդունելության և աջակցության ուղեցույց,

					3. Դասախոսների և ուսանողների շարժունության ծրագրերի ուղեցույց, 4. Միջազգային ծրագրերի և համագործակցության որակի ապահովման կարգ, 5.Ռիսկերի կառավարման և միջազգային գործունեության անվտանգության քաղաքականություն, 6. Միջազգայնացման ծրագրերի թափանցիկության և հաշվետվողականաության կարգ, 7. Կրեդիտների փոխճանաչման կարգ:
	9.3. Բուհի համագործակցության շրջանակների ընդլայնում, համագործակցության պայմանագրերում գիտահետազոտական բաղադրիչի ընդգրկում:	9.3.1.	Համատեղ գիտահետազոտա կան ծրագրերի քանակի աճ:	2025թ.	ԳՊՀ –ի համատեղ գիտահետազոտա կան ծրագրերի մասին տեղեկատվությունը տրվել է 6.2.2 կետում:
	9.4.Օտար լեզվով դասավանդող դասախոսների քանակի աճ:	9.4.1	Նախորդ տարիների համեմատությամբ օտար լեզուներին տիրապետող դասախոսների թվի աճ:	2024թթ.	Հաշվի առնելով միջազգային ակադեմիական փոխանակման ծրագրերին ԳՊՀ դասախոսների մասնակցության աճը՝ կարող ենք փաստել, որ գրանցվել է օտար լեզուներին տիրապետող դասախոսների թվի աճ, քանի որ ըստ փոփոխված կանոնակարգի՝ դասախոսների փոխանակման գործընթացը կազմակերպվում է հարցազրույցի արդյունքներով, որի ընթացքում ստուգվում են տվյալ դասախոսի օտար լեզվի իմացության մակարդակը, գիտելիքները:
10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 1. Դեռևս ներդրված չեն որակի առաջընթացի հստակ գործողություններ, դրանց իրականացման պարբերականություն և չափելի ցուցիչներ: ՈԱ բաժնի հաշվետվությունները մշակվում են ոչ թե ԳՊՀ ղեկավարությանը հասցեագրվելու, այլ հրապարակվելու հեռանկարով: Արդյունքում առաջանում է որոշակի խզում ՊԻԳԲ շրջափուլի փուլերի միջև: 2. ԳՊՀ ՈԱ համակարգի գործունեության, ներդրված ռեսուրսների, վերապատրաստումների, շահակիցների կարիքների ուսումնասիրման համար հավաստի տվյալների հավաքագրման գործիքների, այդ թվում՝ հարցումների մեթոդաբանությունը և կիրառման արդյունավետությունը գնահատման և հիմնավորման կարիք ունեն:				
	10.1. ԳՊՀ որակի ներքին ապահովման արդյունավետության	10.1.1.	ԳՊՀ ՈԱ բաժնի գործունեության երկարաժամկետ,	2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակ	ԳՊՀ-ի (2023-2027թթ.) զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի առաջնահերթություններից և որակի ապահովման քաղաքականությունից ելնելով՝

	գնահատման՝ ամրագրված քանակական և որակական ցուցիչներ՝ ըստ նոր ՌԾ-ի և ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման ձեռնարկում նախատեսված գերակա ուղղությունների:		միջնաժամկետ և տարեկան գործողությունների մշակված պլաններ:		մշակվել է որակի ապահովման (ՈԱ) բաժնի գործունեության երկարաժամկետ, միջնաժամկետ և տարեկան գործողությունների պլաներ՝ համապատասխան արդյունավետության ակնկալվող գնահատման և կատարողական ցուցիչներով: **Հիմք՝** 1. ԳՊՀ-ի ՈԱ բաժնի (2023-2027 թթ.) զարգացման հիմնական ուղղությունների իրականացման հնգամյա գործողությունների պլան: 2. ԳՊՀ-ի ՈԱ բաժնի (2023-2025 թթ.) զարգացման հիմնական ուղղությունների իրականացման միջնաժամկետ գործողությունների պլան: 3. ԳՊՀ-ի ՈԱ բաժնի 2023-2024 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործողությունների պլան:
		10.1.2.	ԳՊՀ 2022-2027թթ. ռազմավարական ծրագրում ամրագրված առաջնահերթություններին համապատասխանող, չափելի ցուցիչներով՝ կրթության որակի ապահովման բարելավված ձեռնարկ:	2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակ	Ներկայումս համալսարանը որակի մշակույթի ներքին համակարգի զարգացման նոր փուլում է: Համալսարանական ՈԱ շարունակական գործընթացների արդյունքում ձևավորվել է որակապես նոր կրթական միջավայր, որը բխում է ԳՊՀ-ի առաքելությունից և զարգացման հնգամյա (2023-2027թթ.) ռազմավարական ծրագրի առաջնահերթություններից՝ միտված ներքին ու արտաքին շահակիցների պահանջներին ու կարիքներին համապատասխան բարձրորակ մասնագետների պատրաստմանը: Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներին աջակցելու համար մշակվել է բուհի կրթության ՈԱ համակարգը, ինչն իր նկարագրությունն է գտել ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման քաղաքականության հիմունքներում: ԳՊՀ զարգացման հնգամյա (2023-2027թթ.) ռազմավարական ծրագրում նշված յուրաքանչյուր գործողության իրագործում և արդյունավետության ստուգում ու գնահատում իրականացվում է որակի ապահովման քաղաքականության հիմունքներում և

					կրթության ՈԱ վերանայված ձեռնարկում ներկայացված ՈԱ կառուցակարգերով: Հիմք՝ 1. ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման քաղաքականության հիմունքներ, 2. ԳՊՀ-ում կրթության ՈԱ ձեռնարկ (փոփոխություններով):
		10.1.3.	1. ԳՊՀ որակի ապահովման բաժնի վերանայված կանոնակարգ, 2. հաշվետվողական նության բարելավված համակարգ:	2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ	Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել է ԳՊՀ ՈԱ բաժնի կանոնակարգը, այն համապատասխանեցվել է բուհի ՈԱ քաղաքականության նպատակին և սկզբունքներին: Որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլն ապահովելիս՝ ԳՊՀ ՈԱ բաժինն առաջնորդվել է հաշվետվողականության, օբյեկտիվության, թափանցիկության և համագործակցության սկզբունքներով: **Հիմք՝** 1. Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի գործունեության կանոնակարգ (փոփոխություններով):
	10.2. ԳՊՀ ՈԱ համակարգի գործունեության, որակի ապահովման վերաբերյալ հավաքագրվող տեղեկատվության հավաստիության չափելի ցուցիչներ, շահակիցների բավարարվածության աստիճանի աճ:	10.2.1.	ԳՊՀ ՈԱ գնահատման նոր գործիքների ներդնում:	2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ	ԳՊՀ ՈԱ և գնահատման նոր գործիքների ներդրման գործընթացը կրում է շարունակական բնույթ: Այն նպատակ ունի բարձրացնելու կրթության որակը և երաշխավորելու կրթական գործընթացի համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Այս համատեքստում ԳՊՀ ՈԱ բաժինը կիրառում է բուհի բոլոր գործընթացների որակի ապահովմանը միտված արժանահավատ, փաստահենք տվյալների հավաքագրման հետևյալ գործիքակազմը. 1. հարցումներ, 2. նպատակային (ֆոկուս-խմբային) կլոր սեղան-քննարկումներ, 3. դասալսումներ, 4. հաշվետվություններ, ինքնավերլուծություններ, 5. SWOT վերլուծություններ, 6. համադրական, հենանիշային վերլուծություն /բենչմարքինգ/՝ լավագույն փորձի

					ուսումնասիրություններ և համեմատական հետազոտություններ, առաջավոր փորձի կիրառում: **Հիմք՝** 1. ԳՊՀ-ում կրթության ՈԱ ձեռնարկ (փոփոխություններով):
		10.2.2	ԳՊՀ ՈԱԲ վերապատրաստված մասնագետներ և նոր ձեռք բերված անհրաժեշտ ռեսուրսներ:	2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակ	ՈԱԲ-ի մասնագետները հաշվետու ժամանակահատվածում մասնակցել են ինչպես ՀՀ Մասնագիտական կրթության ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպած դասընթացներին, քննարկումներին, աշխատանքային հանդիպումներին, այնպես էլ այլ հանդիպումների և վերապատրաստումների, այդ թվում՝ 1. 2022 թ. սեպտեմբերի 12-ից 16-ը Եվրոպական Միության «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագիր Պորտուգալիայի Հանրապետության Էվորայի համալսարանում, 2. 2022 թ. նոյեմբերի 23–ին ՀՀ Մասնագիտական կրթության ՈԱԱԿ–ում «Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով աշխատաժողով, 3. 2023 թ. մարտի 21-ին ԳՊՀ ՈԱԲ աշխատակիցները մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված առցանց հանդիպմանը՝ նվիրված մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, բարելավման և լավագույն փորձի տեղայնացման հիմնահարցերի քննարկմանը, 4. 2023 թ. մայիսի 25-ին ԳՊՀ ՈԱԲ աշխատակիցները մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված առցանց հանդիպմանը՝ նվիրված «Դասի որակի ապահովում» թեմայով քննարկմանը, 5. 2023 թ. հուլիսի 3-ից 7-ը Եվրոպական Միության «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագրի շրջանակում ԳՊՀ ՈԱԲ բաժնի մասնագետը մեկշաբաթյա վերապատրաստման դասընթաց անցավ Պորտուգալիայի Հանրապետության Մինհոյի համալսարանում: Հաշվետու ժամանկաահատվածում ԳՊՀ ՈԱԲ-ը ապահովվել է նյութական և ֆինանսական անհրաժեշտ

					ռեսուրսներով, ունի աշխատասենյակ, որը համալրված է անհրաժեշտ գույքով և նյութատեխնիկական ռեսուրսներով: **Հիմք՝** 1) ԳՊՀ գործունեության հաշվետվություն և ինքնավերլուծության զեկույցներ՝ https://gsu.am/hy/%d5%b0%d5%a1%d5%b7%d5%be%d5%a5%d5%bf%d5%be%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/
		10.2.3.	ԳՊՀ ՈԱ բաժնի կողմից շահակիցների կարիքների ուսումնասիրման նոր գործիքների ներդրմամբ հավաստի տեղեկատվության ապահովում:	2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ	Ինչպես վերը՝ 10.2.1-րդ կետում ներկայացվեց, ԳՊՀ ՈԱԲ-ը բուհի բոլոր գործընթացների որակի ապահովմանը միտված տվյալների հավաքագրման համապատասխան գործիքակազմ է կիրառում, որոնց արդյունավետությունը պայմանավորող կարևոր գործոններից է գնահատման հավաստի, փաստահենք տվյալների վրա հիմնված բազմակողմանի մոտեցումը, որն էլ ապահովում է գնահատման արժանահավատությունը և օբյեկտիվությունը: Այս համատեքստում ԳՊՀ-ն իր գործունեության տարբեր ոլորտներում (կառավարման, կրթական, սոցիալ-մշակութային, գիտահետազոտական, հանրային պատասխանատվության, միջազգայնացման և այլն) իրականացվող աշխատանքները գնահատելիս և գնահատման մեթոդաբանությունը մշակելիս՝ հաշվի է առնում այդ աշխատանքների բնույթը, գնահատման նպատակն ու անհրաժեշտ ռեսուրսները, տվյալ ժամանակահատվածում գնահատում կատարելու նպատակահարմարությունն ու պարբերականությունը:
		10.2.4.	ԳՊՀ որակի ապահովման բաժնի իրականացրած հարցումների հիմնավորված մեթոդաբանություն, որակական և քանակական տվյալների համադրում, ձեռքբերված հավաստի տեղեկատվության հիման վրա բարելավման ուղղությունների մշակում և	2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ	ԳՊՀ ՈԱԲ-ի կողմից իրականացված հարցումների արդյունքում իրականացվում են համապատասխան վերլուծություններ, որտեղ հստակ նկարագրվում են հարցումների նպատակը, անցկացման նկարագրությունը, հարցերի ընտրանքը և մեթոդաբանությունը, հարցման համար ընտրված թիրախային խմբի նպատակային և հասցեական բնույթը: Հարցման արդյունքում հավաքագրված որակական և քանակական տվյալների վերլուծության հիման վրա արվում են եզրակացություններ, որտեղ ՈԱԲ-ը հանդես է գալիս

			համապատասխան միջոցառումների իրականացում:		առաջարկություններով, որոնք դառնում են ուղենիշային հետագա բարելավումների համար: **Օրինակ 1.՝** 2022-2023 ուստարում ՊԴ կազմի կարիքների վերհանմանը միտված հարցումների գնահատման արդյունքում առաջնային է համարվել ԳՊՀ ենթակառուցվածքների՝ մասնավորապես հանրակացարանի վերանորոգումը, նոր գույքով համալրումը: ՈԱԲ-ի համապատասխան վերլուծության ներկայացման արդյունքում մշակվել են բարելավման առաջարկություններ, որի արդյունքում խնդիրը ներառվել է ԳՊՀ 2023-2024 ուստարվա զարգացման ռազմավարական գործողությունների պլանում և հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է: **Օրինակ 2.՝** 2022-2023 ուստարում հարցումների ընթացքում ուսանողները հնարավորություն են ունեցել ներկայացնելու իրենց դիտարկումներն ու առաջարկությունները կրթական ծառայությունների, ուսումնական ռեսուրսների վերաբերյալ: Իրականացված հարցումների վերլուծության և ներկայացված առաջարկությունների հիման վրա անհատական աշխատանքները փոխարինվել են ինքնուրույն հետազոտական աշխատանքներով, ավելացել է համակարգչային լսարանների թիվը, հեռակա բաժնի ուսանողների առաջարկությամբ ուսումնական շաբաթների թիվը 3-ից դարձել է 4, դասամիջոցների ընթացքում հնչող զանգը փոխարինվել է երաժշտությամբ, ավելացվել է պրակտիկայի տևողությունը, կազմակերպվել են կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանն ու ամրապնդմանը միտված էքսկուրսիաներ: